# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2-5
## <<ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.08.2017 թ.
ժ. 15:30

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահող | Ռ. Եղիազարյանը /գնահատող/, |
| Հանձնաժողովի անդամներ | Գ. Գևորգյանը /գնահատող/, |
| | Ֆ. Սարգսյանը /բացող/, |
| | Ա. Գրիգորյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը |
| Բացակայում է հանձնաժողովի նախագահ | Ա. Զանջուղազյանը |

### 1. Նիստի նախագահող ընտրելու մասին
(Գ. Գևորգյան)

1.1 Նիստի նախագահող ընտրել հանձնաժողովի անդամ Ռ. Եղիազարյանին.
Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

### 2. Գնումների բողոքարկման խորհրդի 11.08.2017 թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/24 որոշման քննարկման մասին
(Ռ. Եղիազարյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ գնումների բողոքարկման խորհրդի 11.08.2017 թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/24 որոշման հրապարակման մասին գրությունը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն ստացել է 15.07.2017 թ-ին.

2.2 Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 11.08.2017 թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/24 որոշումն, ինչպես նաև վերոհիշյալ որոշման կատարման իրավապարտադիր լինելու հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Դադարեցնել <<ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7>> ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2017թ. նիստի արձանագրությամբ <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը.
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.3 Հիմք ընդունելով 2.2 կետով ընդունված որոշումը՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 25.07.2017թ. նիստի արձանագրության 2.1 կետով <<Ագարակ>> ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող ճանաչելու մասին, 3.1 կետով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու ու առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին ընդունված որոշումները.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.4 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.3 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Զբաղեցրած տեղը |
|---|---|---|
| 1 | <<Գազկոմշին>> ՍՊԸ | Առաջին |
| 2 | <<Ագարակ>> ԲԲԸ | Երկրորդ |
| 3 | <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ | Երրորդ |
| 4 | <<ԵՐԱՆՈՍՇԻՆ>> ՍՊԸ, <<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ (կոնսորցիում) | Չորրորդ |
| 5 | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ | Հինգերորդ |
| 6 | <<Թիվ 1Շինվարչություն>> ԲԲԸ | Վեցերորդ |
| 7 | <<Նաիրիշին>> ԲԲԸ | Յոթերորդ |
| 8 | <<Բաղրամյանշին>> ԲԲԸ | Ութերորդ |
| 9 | <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ | Իններորդ |
| 10 | <<Բիդեր>> ՍՊԸ | Տասներորդ |
| 11 | <<Վահրադյան Շին>> ՍՊԸ | Տասնմեկերորդ |
| 12 | Սիսիանի (Նոր բակ) <<Նորոգշին>> ՍՊԸ | Տասներկուերորդ |
| 13 | <<ԱՐՀՈՎՇԻՆ>> ՍՊԸ | Տասներեքերորդ |
| 14 | <<ԳՈՌՏԻԳ>> ՍՊԸ | Տասնչորսերորդ |
| 15 | Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության <<Ախուրյանի Կոոպշին>> ՍՊԸ | Տասնհինգերորդ |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

## 3 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների մասին, սահմանված կարգով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Գազկոմշին>> ՍՊԸ-ին ծանուցել, որ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին ընկերության համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

## 4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 24-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ- 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ Ռ. Եղիազարյան

Անդամ՝ Գ. Գևորգյան

Ա. Գրիգորյան

Ֆ. Սարգսյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան